ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի դեկտեմբերի 4-ին, կիրակի օրը, Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի շրջանավարտ բարեշնորհ Ստեփան սարկավագ Դավթյանի քահանայական ձեռնադրությունը՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի է ունենում կոչումն ընծայության արարողությունը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

«Նայեաց ի մեզ» շարականի հնչյուններին ներքո բացվում են ավանդատան դռները, և եկեղեցական թափորով դեպի Իշման Ս. Սեղան է առաջնորդվում ձեռնադրող Տ. Ներսես սրբազան հայրը: Նրան է հետևում նորընծա բարեշնորհ սարկավագը: Ձեռնադրող սրբազան հայրը բազմում է Իշման Ս. Սեղանի առջև դրված աթոռին:

Սկսվում է «Կոչումն քահանայութեան յերեկոյէ» արարողության կարգը՝ խարտավիլակութեամբ Տ. Նավասարդ աբեղա Կճոյանի:

Խարտավիլակ հոգեշնորհ հայր սուրբը, ստանալով խոսելու իրավունք, ասում է.

«Հայր սուրբ, խնդրէ ի քէն մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես զՍտեփան սարկաւագս զոր ընծայէ քեզ, յաստիճան քահանայութեան»:

Հոգևոր և իմացական պատրաստության մասին հրապարակայնորեն քննության անցնելուց հետո, նորընծան հանդիսավոր հայտարարությամբ հանձն է առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Ապա նորընծան ասում է. «Ունիմ զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ հայրապետն»:

Արարողության ավարտին նորընծան հրապարակայնորեն տալիս է իր «հաւատոյ խոստովանութիւն»-ը՝ ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Դեկտեմբերի 4-ին, կիրակի օրը, ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Կատարվում է «Կանոն ձեռնադրութեան քահանայի» արարողության կարգը: Նորընծան ծնկաչոք ձախակողմյան աստիճաններով բարձրանում է Ավագ խորան և, շրջվելով դեպի հավատացյալ բազմությունը, ձեռքերը բարձրացնում է վեր՝ ի նշան աշխարհից հրաժարման:

Ընթերցվում է Ս. Գրքից օրվա ընթերցվածքը և միաբերան ասվում «Հաւատամք»-ը:

Ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք Յիմեւանց», որից հետո ա-

Զեռնադրությունից մի պահ

ղոթքով և սրբությամբ Նորընծան ստանում է քահանայական փիլոն և պատարագի զգեստներ:

Նորընծան վերանվանվում է Տ. Վահան:

Այնուհետև ձեռնադրող սրբազան հայրը Նորընծային է տալիս «զսկիհն և զմսուղզմայն»՝ որպես պատարագ մատուցելու իշխանության նշանակ: Ապա Նորընծան, դառնալով դեպի ժողովուրդը, տալիս է իր առաջին քահանայական օրհնությունը՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա պատարագիչ սրբազանը բովանդակալից քարոզ է խոսում և շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսք ուղղում Նորընծային:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը Նորընծայի գլխից հանում է «ջբուն»-ը (գլդակ)՝ փոխարինելով այն կուսակրոն քահանայության խորհրդանիշ վեղարով՝ ասելով.

«Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Աստուած զգեցուցէ քեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ և սրբութեամբ...»:

Արարողության ավարտին Նորընծան Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի առաջնորդությամբ ներկայանում է Վեհափառ Հայրապետին և ստանում Նորին Սուրբ Օծության օրհնությունը:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս ջերմորեն շնորհավորում է Նորընծային, այն հույսով և հավատով, որ նա իր ողջ ուժերն ի սպաս կդնի ի ծառայություն Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ